

Մյուս օրինակները երգիչներն ու նկարիչներն են : Երգն ու նկարչությունը ազգում են մարդու զգայարանների վրա՝ տեսողական, լսողական, և մենք ապրում ենք այդ փոքր աշխարհում՝ զգալով ցավը, հաճույքը, ուրախությունը և այլն: Ինչպես կինոն, տվյալ դեպքում երաժշտությունը տվյալ հասարակության մշակույթի մասնիկ է, և ինչքանով հայ երգիչը ու երաժիշտը կկարողանա հուզել ֆինն ազգի զգացմունքը, կախված է մի մեծ խմբի աշխատանքից /սցենար, դիրիժոր, դիզայն, նկարիչ, ռեժիսոր, լույսի մասնագետ և այլն/:

Հարգելի՛ երեխաներ, վերջանում է ուսումնական տարին, և դուք պետք է որոշեք՝ ինչն^օվ եք զբաղվելու, որտե՞ղ եք սովորելու: Դա հեշտ բան չէ, քանի որ ակամայից, մի ներքին ձայնով դուք արդեն դա որոշել եք, բայց, ինչպես միշտ, սպասում ենք ինչ- որ մեկի աջակցությանն ու խորհրդին, չնայած դուք ձեզ ավելի լավ եք ճանաչում:

5-6 տարի առաջ Վրաստանի նախկին նախագահը մի հարցազրույցում պատմեց իր մանկության մասին:Նա նշեց, որ հիշում է իր մանկությունը, երբ հավաքվում էին պապի ընկերները, բարեկամները: Երեկոները նրանք քննարկում էին տարբեր իրադարձություններ թե՛ Վրաստանում, թե՛ նրա սահմաններից դուրս, և այդ մթնոլորտը ձևավորեց Վրաստանի փրկիչ Սահակաշվիլուն: Ուզում եմ ասել, որ նրա պապը ու իր ընկերները նախկին գիտնականներ ու տարբեր հասարակական գործիչներ են եղել: Նա, պատասխանելով լրագրողների հարցերին, ասաց, որ երբ ավարտեց դպրոցը, իրեն մտահոգում էին այն մտքերը, որոնք դեռ փոքր տարիքից էին հուզել:

Հարգելի՛ երեխաներ, հնարավոր է դուք ձեզ հարց տաք, ի՞նչ միտք ունի սովորելը, եթե ավարտելուց հետո արտագնա աշխատանքով պետք զբաղվեք, կամ աղջիկները կմտածեն, թե պետք է ամուսնանան ու զբաղվեն երեխաների դաստիարակությամբ, տնային գործերով: Կամ, ինչպես ասում են, թե <<ձեռք բռնող>> լինի, ես էլ կսովորեմ, կամ պետք է սովորել այն մասնագիտությունը, որը շատ վաստակ է ապահովում այսօր: Բոլոր այս հարցերին պատասխանելու համար մենք կներկայացնենք հայրենասիրության մասին մեր պատկերացումները:

Մեր հասարակության մեջ հայրենասերը ենթագիտակցորեն այն մարդն է, ով զենքը ձեռքին գնում է թուրքի հետ կռվելու և << լավ >> կլինեք, որ նա չվերադառնար, քանի որ զոհվելուց հետո կարելի էր լացել, հուշարձան դնել ու սուտ երկար- բարակ խոսել, իսկ եթե, բարեբախտաբար, կռվից մարդիկ վերադառնում են , նրանց հասարակությունը կամ չի նկատում, կամ, վատագույն դեպքում ինչպես ասում՝ եթե լավ տղա լինեիր, կզոհվեիր: Սա շատ ցավալի է, քանի որ դա հայրենասիրության աղավաղված ընկալումն է:

Հարգելի՛ երեխաներ, հայրենասեր է նա, ով լավ է սովորում, որպեսզի զարգացնի գիտությունը, որ իր հայրենիք Հայաստանը դառնա ճանաչված աշխարհում: Հայրենասերը նա է, ով պրոֆեսիոնալ շինարար է եւ կառուցում է ամուր տներ , որոնք կարող են կանգնած մնալ դարերով: Ցանկացած զբոսաշրջիկ, գալով Հայաստան, իր հետ կտանի մեր պրոֆեսիոնալ ճարտարապետի, քանդակագործի, շինարարի համբավը և այն կտարածի աշխարհով մեկ: Հայրենասերը նա է, ով պրոֆեսիոնալ բժիշկ է և իր աշխատանքի շնորհիվ կբարձրացնի մարդկանց ապրելու միջին տարիքը և կնվազեցնի անբուժելի հիվանդությունների թիվը: Հայրենասերը նա է, ով պրոֆեսիոնալ դիվանագետ է և միշտ կպաշտպանի մեր հայրենիքի շահերը, հայրենասեր է մեր զինվորը, ով պետք է տիրապետի ժամանակակից ռազմարվեստին և անառիկ պահի մեր հայրենիքը:

Հարգելի՛ ավագ դասարանցիներ, դուք պարտավոր եք գիտակցել, որ այդ բոլորին և ավելիին հասնելու համար պետք է լավ սովորեք և օգտագործելով եվրոպական կրթական համակարգի առաջընթացը՝ դառնաք պրոֆեսիոնալ, որի դեպքում արդեն ինչ- որ մեկը չի կասկածի ձեր հայրենասիրությունը:

<<1+1>>